

Երևանի «Արգենտինյան Հանրապետություն հ. 76 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ

Բանալի բառեր: Չարենց, մանկավարժական-մեթոդական հայացքներ, գրականության ուսուցում, գեղագիտական ճաշակ, պարզ միտք, գրական սեռեր և ժանրեր, լեզվաոճական քննություն:

Չարենց գրողի և գրականագետի ժառանգությունը ենթարկվել է բավական հանգամանալից վերլուծության ու գնահատման: Իսկ թե մանկավարժական և մասնավորապես լեզվի ու գրականության ուսուցման, ինչպես նաև դասագրքեր կազմելու մասին ինչ հայացքներ և տեսակետներ ունի նա, քչերին է հայտնի: Այդ հարցերի վերաբերյալ նրա մտքերն ու կարծիքները, որ լայնորեն սփռված են գրականագիտական բնույթի հոդվածներում, արխիվային փաստաթղթերում, հայ գրականության ուսուցման մեթոդաբանական սկզբունքների մի կուռ ու ամբողջական համակարգ են:

Չարենցի կարծիքով ամեն մի ազգ համամարդկային քաղաքակրթությունը հարստացնում է ինքնատիպ նրբերանգներով: Ուստի նա անհրաժեշտ է համարում ուսումնասիրել և յուրացնել խորհրդային բազմազգ ժողովրդի գրական ժառանգությունը: Այդ կապակցությամբ նա առաջ է քաշում տարբեր ժողովուրդների գրականության փոխադարձ թարգմանության հարցը: Բարձրորակ թարգմանությունը համարելով մեծ արվեստ՝ նա թարգմանության մեջ ամենագլխավորը համարում էր գրվածքների իսկական ոճն ու ոգին պահպանելը:

Թե որքան լրջորեն է վերաբերվել Չարենցը գիտական բնույթի աշխատանքներին, պարզ երևում է Ռ. Ջարյանին հայտնած մտքերից: Հանձնարարելով այն ժամանակ երիտասարդ այդ գրականագետին առաջաբան գրել Նար-Դոսի «Աննա Սարոյան» վիպակի համար՝ Չարենցն ավելացնում է. «Առաջինը հեշտ գործ չկարծես: Սկզբում ծանոթացի՛ր, տե՛ս, թե ուրիշներն ինչպես են արել, սկզբունքները պարզի՛ր, մեթոդը, և հետո ինքդ արա: Ընդօրինակելու կարիք չկա, բայց եղած փորձը նկատի առ՝ ամեն ինչ նորից չսկսելու համար: Պետք է լավ գրել, միմիայն լավ: Չերկարացնես, որքան կարճ, այնքան լավ»¹:

Արդ, որո՞նք են գեղագիտական այն ընդհանուր դրույթները, որոնց հիման վրա Չարենցի կարծիքով պետք է կազմակերպել հայ գրականության ուսուցումը դպրոցում և ստեղծել հայ գրականության դպրոցական դասագրքեր:

Չարենցն աճող սերնդի գաղափարական հոգևոր դաստիարակության հարցում մեծ տեղ էր հատկացնում մայրենի լեզվի և գրականության ուսուցմանը: Այդ առարկաների ուսուցումը դպրոցական նստարանից սովորողներին ոչ միայն դարձնում է գրագետ, բազմակողմանիորեն զարգացած, այլև նրանց մեջ սերմանում հայրենասիրություն, գեղագիտական բարձր ճաշակ և մարդկային այլ վեհ հատկանիշներ:

¹ Հիշողություններ Ե. Չարենցի մասին, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 357

Նա կարծում էր, որ հայ գրականության ուսուցումը պետք է սկսել առաջին աստիճանի դպրոցից, շարունակել և խորացնել երկրորդ աստիճանի դպրոցում և ամբողջացնել բուհերում՝ որպես ամբողջական ու լրիվ դասընթաց:

Կարծես այսօրվա պահանջներից ելնելով էր մեծ բանաստեղծը պնդում, որ գրականության դասընթացում ու դասագրքերում զետեղված նյութերը ոչ միայն պետք է հետաքրքրական հարցեր արծարծեն, ունենան հարուստ բովանդակություն, վեհ գաղափարներ արտահայտեն ու գեղեցիկ մղումներ տան աշակերտին, այլև «...պետք է գտնվեն գեղարվեստական բարձր աստիճանի վրա: Դասագիրքը պետք է աշակերտի ճաշակը մշակի, զարգացնի սեր դեպի լեզուն, ոճը, գեղեցիկի ըմբռնումը: Աշակերտը պետք է կլանվի բովանդակությամբ, համակվի գաղափարներով, բայց և պետք է հասկանա պատկերը, հիանա դիպուկ գտնված համեմատությամբ»²:

5-7-րդ դասարանների համար դասագիրք կազմելու սկզբունքների բացատրականում Չարենցը գրում է. «Կատեգորիկ կերպով պետք է խուսափել 13-14 տարեկան երեխայի համար անըմբռնելի բառերից, տերմիններից և սխեմատիկ ֆորմուլներից, որոնք ոչ միայն արժեզրկում են գեղարվեստական գրականությունը և սեր չեն առաջացնում դեպի գեղարվեստը, այլև չեն նպաստում աշակերտի մեջ գեղարվեստական ճաշակի զարգացմանը»³:

Եվ այսպես, քանի որ «գեղեցիկի զգացողությունը գրողի տաղանդի մի մասն է կազմում, և առանց դրա իսկական գրող չկա»⁴, ուստի անհրաժեշտ է գրական երկի ուսումնասիրման ժամանակ բացահայտել ոչ միայն գաղափարական, այլև գեղարվեստական կողմը, և այդ ամենը միաձույլ, ներքին սերտ փոխկապակցության մեջ:

Լինելով ողջ էությամբ ինտերնացիոնալիստ՝ Չարենցը պահանջում էր գրականության և՛ դպրոցական, և՛ բուհական դասընթացներում բավարար չափով ուսումնասիրել թե՛ խորհրդային և թե՛ արտասահմանյան ժողովուրդների գրականության լավագույն նմուշները: Ընդ որում, նրա կազմած դասագրքերում տեղ են գտել գրական տարբեր սեռերի ու ժանրերի պատկանող բազմազան ստեղծագործություններ:

Չարենցն անչափ բարձր էր գնահատում արևմտահայ գրականությունը, միանգամայն սխալ համարում հայ ժողովրդի ամբողջական մշակույթը արիեստականորեն երկու մասի բաժանելը: Նա առաջինը բարձրացրեց արևմտահայ գրականության հրատարակության հարցը և իր կազմած դասագրքերում զգալի տեղ հատկացրեց արևմտահայ նշանավոր գրողների երկերին:

Գրողի ստեղծագործության ընդհանուր գնահատականը տալիս Չարենցն ասում էր, որ չպետք է ղեկավարվել սոսկ նրա առանձին երկերի աժանիքներով, այլ

² Հիշողություններ Ե. Չարենցի մասին, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 367

³ Հիշողություններ Ե. Չարենցի մասին, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 347

⁴ Հիշողություններ Ե. Չարենցի մասին, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 347

պարզել նրա ստեղծագործության ընդհանուր ուղղությունը՝ դեպի ուր է նա տանում առա՞ջ, թե՞ հետ:

Չարենց գրականագետն այն կարծիքին էր, որ գրականության վերլուծությունը նույնպես ստեղծագործական աշխատանք է, և դրանով զբաղվողը, լինի գրականագետ, բանասեր, քննադատ թե ուսուցիչ, պետք է ունենա իր անհատականությունը, աշխատանքի իր ինքնատիպ ոճը, հարազատ մնա իր ներքին խառնվածքին և կարողանա պարզ, միաժամանակ պատկերավոր ու արտահայտիչ ձևով վերարտադրել իր ասելիքը: Դիմելով քննադատ Ռ. Չարյանին՝ Ս.Տարոնցու գրքի մասին նրա գրած գրախոսության առիթով նա հետևյալ դատողություններն է անում. «Ինձ թվում է, որ քո խառնվածքը այլ է, հողվածներիդ ոճը՝ ուրիշ: Հարազատ մնա քեզ: Ինչո՞ւ ես այդպես չոր գրում: Կարծում ես միայն գրո՞ղը պետք է ոճ ունենա, քննադատը՝ ոչ: Սխալվում ես: Քննադատն էլ պետք է ստիլիստ լինի, նրա խոսքն էլ պետք է փայլ ունենա, պատկերի ուժ: Քո լեզվի մասին էլ ասելիք ունեմ: Նախադասություններիդ երկար են, երբեմն խճճված, տեղ-տեղ մանվածապատ: Մարդ կարդում է ու չի հասկանում, թե ինչ ես ուզում ասել: Լսի՛ր խորհուրդս, գրի՛ր պարզ, միտքդ հստակ ձևակերպի՛ր: Սեղմ, կարճ նախադասությունը գերադասի՛ր»⁵:

Կարիք կա՞ ապացուցելու, որ աշխատանքի ինքնատիպ ոճ և խոսքի այսպիսի կուլտուրա ոչ միայն գրականագետներին ու քննադատներին, այլև թերևս ամենից շատ ուսուցչին է հարկավոր: Սակայն մտածողության ու լեզվի սեփական ոճ, վառ, անկրկնելի անհատականություն, կյանքի երևույթների նկատմամբ սեփական անհատական հայեցակետ պետք է դաստիարակել ոչ միայն քննադատների, ուսուցիչների, այլև բոլոր մարդկանց, այդ թվում և աշակերտների մեջ:

Եվ իրոք, մարդկային կյանքի երևույթները, այդ թվում և նրանց գեղարվեստական վերարտադրությունը այն ժամանակ են ներքին շունչ, իմաստ ու երանգ ստանում, երբ ընկալվում են յուրաքանչյուր անձնավորության անկրկնելի, ինքնատիպ հայեցակետով: Մարդը կարող է այն ժամանակ դառնալ բազմակողմանիորեն զարգացած, վառ ու ինքնատիպ անհատականություն, երբ նա գիտելիքների պաշար ամբարելու հետ մեկտեղ զարգացնի իր ինքնուրույն մտածողությունը, մշակի երևույթների գնահատման ինքնուրույն չափանիշներ ու սեփական ճաշակ: Այս ամենի բացակայությունը մարդկային մտածողության ու հոգեկան բոլոր գործընթացների զագացումը կտանի շաբլոն ուղիով, դեպի բոլոր տեսակի խոհերի ու զգացմունքների ստանդարտացում, մի բան, որ կնշանակի բարոյական-հոգևոր մահ ոչ միայն բանական էակի, այլև արվեստագետի համար:

Գեղարվեստական երկի ինքնատիպ առանձնահատկությունները հնարավոր չէ լիովին հասկանալ, եթե աշակերտը գաղափար չունի գրական սեռերի ու ժանրերի ընդհանուր ու տարբերակիչ գծերի մասին, իսկ հեղինակի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը թերի կմնա, եթե չպարզաբանվեն նաև նրա ժանրային նախասիրությունները: Այս իմաստով առանձին կարևորություն ունի ցածր դասա-

⁵ Հիշողություններ Ե. Չարենցի մասին, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 361

րաններից սկսած սովորողներին գրական տարբեր սեռերի ու ժանրերի առանձնահատկություններին ծանոթացնելը:

Չարենցը խորհուրդ էր տալիս առանձնահատուկ ուշադրություն դարձնել մասնավորապես պոեզիայի ուսուցմանը: Նշելով, որ պոեզիայում հիմնականն զգացածի և արտահայտածի համապատասխանությունն է, այսինքն՝ բանաստեղծի անկեղծությունն ու անմիջականությունը, նա զգուշացնում էր՝ գրականության ծրագրերում և դասագրքերում երկարաշունչ քնարական գործեր չզետեղել ոչ միայն տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով, այլև պարզապես այն պատճառով, որ բարձրարվեստ քնարական գործերը չեն կարող երկարաշունչ լինել:

Բացահայտել առանձին հեղինակների լեզվի ու ոճի ինքնատիպությունը և մեր լեզվի առանձնահատկությունները՝ ոչ միայն գրականագետ քննադատի, այլև ուսուցիչների պարտքն է: Հանճարեղ բանաստեղծի գրականագիտական հոդվածների ու դպրոցական դասագրքերի վերլուծությունը մեզ բերում է այն եզրակացության, որ դպրոցում կատարվող լեզվաոճական ուսումնասիրությունների ընթացքում առանձնահատուկ տեղ պետք է հատկացնել բանաստեղծական տաղաչափության հարցերի պարզաբանմանը: Պոեզիայում մեծ դեր են կատարում բանաստեղծական ռիթմավորման միջոցները: «Բանաստեղծությունները պետք է ինքնին հանճարեղ լինեն, որպեսզի հնչեն առանց հանգի...», - հայտնում է նա իր կարծիքը⁶:

Ընդունելով այն ճշմարտությունը, որ մինչև 1917թ. մեր ընթերցողը կրթվել ու դաստիարակվել է ռուս գրականության ավանդույթներով, որ ռուս գրականությունը այն կենարար աղբյուրն է եղել, որից խմել է մեր գրականությունը իր բնականոն զարգացման հյութերը, մեծ բանաստեղծը միաժամանակ զգուշացնում էր, որ գրական ազդեցությունն ուղղակի ու պարզունակ ձևով չպետք է հասկանալ: Ճշմարիտ արվեստագետը, ազդեցություն կրելով մեկ ուրիշից, դրա բոլոր տարրերը թրծում է սեփական ստեղծագործական քուրայում, նրանց նոր շունչ ու հոգի տալիս և շարունակում զարգացումն իր ուրույն ու անհատական ուղիով⁷:

Педагогическо-методические взгляды Егише Чаренца

Ключевые слова: *Чаренци, педагогико-методические взгляды, преподавание литературы, эстетический вкус, простая мысль, литературные жанры, лингвистическая и стилистическая экспертиза.*

В статье рассмотрены педагогические концепции и взгляды Е. Чаренца, в частности по обучению языка и литературы, а так же по составлению учебников. Ознакомление с данным материалом поможет учителям армянского языка и литературы лучше и более целенаправленно организовывать процесс обучения.

⁶ «Խորհրդային Հայաստան», 1922, հ. 136

⁷ Մախչանյան Հ. Մ. , 1972, Եղիշե Չարենցը գրականության ուսուցման մասին, Երևան:

The teaching-methodical opinions of Eghisheh Charents

Keywords: *Charents, pedagogical-methodological views, teaching literature, aesthetic taste, simple thought, literary genres and genres, linguistic and stylistic examination.*

The article includes in the teaching methodical opinions of Eghisheh Charents on the teaching of language and literature. His methodical opinions on the compose of learning books wich knowledge can help to teachers better and purposeful realize the learning process.

Գրականություն

1. Մախչանյան Հ. Մ. , 1972, Եղիշե Չարենցը գրականության ուսուցման մասին, Երևան:
2. Չարենց Ե. 1957, Հիշողություններ Ե. Չարենցի մասին, Երևան:
3. Հայպետիրատ 1961, Հիշողություններ Ե. Չարենցի մասին, Երևան: